Տպագրված է 4 օրինակից
Օրինակ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

2003թ. __Մայիսի 29-ին

Շ. ԴՈՅԴՈՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ է
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ

13 06 2003թ.

ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐԸ՝ 211.171.01863

ՎԿԱՅԱԿԱՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 034 06 0776

ՊԵՏՌԵԳԻՍՏՐԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ - 2003

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը /այսուհետև՝ Կազմակերպություն/ հասարակական կազմակերպություն է, որը գործում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ միջազգային պայմանագրերի, գործող օրենսդրության և սույն կանոնադրության համաձայն:

1.2. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրության համաձայն:

1.3. Կազմակերպությունը չի հետապնդում քաղաքական նհատակներ, չի հարում որեւէ քաղաքական հոսանքի:

1.4. Կազմակերպության պաշտոնական անվանումն է.

հայերեն՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»:

ռուսերեն՝ «Центр свободы информацuu»

անգլերեն՝ «Freedom of Information Center»

1.5 Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, քաղաք Երևան, Պուշկինի 3ա, Ժուռնալիստների տուն:

2. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կազմակերպությունը հետապնդում է հետևյալ նպատակները և խնդիրները.

- Նպաստել կոռուպցիայի դեմ պայքարին,
- Նպաստել Հայաստանում տեղեկատվության ազատության զարգացմանը,
- Նպաստել մարդկանց, մասնավորապես լրագրողների տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանությանը,
- Աջակցել տեղեկատվության ազատության օրենսդրության կատարելագործմանը,
- Նպաստել մարդկանց՝ տեղեկատվության ազատության ոլորտում իրավագիտակցության բարձրացմանը եւ կրթությանը,
- Աջակցել մարդկանց, մասնավորապես լրագրողներին իրավաբանական եւ մասնագիտական խորհրդատվություն ստանալուն,
- Աջակցել տեղեկատվության ազատության իրավունքի դատական պաշտպանության իրականացմանը:

Վերոհիշյալ նպատակների իրականացման համար Կազմակերպությունը.

- Ուսումնասիրում է ՀՀ ընթացիկ օրենսդրությունը՝ ինֆորմացիայի ազատությանն առնչվող օրենսդրական բացերն ու թերությունները բացահայտելու համար,
- Առաջարկություններ եւ փոփոխություններ է մշակում Հայաստանի ՏԱ օրենսդրությունը այս ուղղությամբ բարելավելու նպատակով,
- Իրավաբանական խորհրդատվությամբ է ապահովում քաղաքացիներին, հասարակական կազմակերպություններին, լրագրողներին,
- Համագործակցում է ՀՀ պետական և հասարակական մարմինների ու հաստատությունների հետ,
- մշակում է և իրականացնում կազմակերպչական, կրթական, բարեգործական և այլ ծրագրեր,
- իրականացնում է ուսուցողական ծրագրեր, սեմինարներ, աշխատանքային քննարկումներ,

- անմիջական կապեր է հաստատում ՀՀ, միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների հետ, մասնակցում է համատեղ ծրագրերին, անդամակցում է միջազգային ոչ կառավարական կազմակերպություններին,
- իրականացնում է իր կանոնադրության նպատակներից բխող այլ գործունեություն:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

3.1 Կազմակերպության բարձրագույն մարմինն է անդամների Ընդհանուր Ժողովը, որը հրավիրվում է Վարչության կողմից ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս, քան տարին մեկ անգամ: Արտահերթ ընդհանուր ժողով կարող է հրավիրել Կազմակերպության վարչության նախագահի կամ անդամների առնվազն մեկ երրորդի եւ Վերահսկիչ հանձնաժողովի պահանջով: Հերթական ընդհանուր ժողովի հրավիրման և օրակարգի մասին անդամները տեղյակ են պահվում ոչ ուշ քան մեկ ամիս առաջ: Ընդհանուր Ժողովն իրավասու է որոշումներ ընդունել, եթե ներկա են Կազմակերպության անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

3.2. Կազմակերպության կառավարող և գործադիր մարմինն է Վարչությունը, որը ընտրվում է Ընդհանուր Ժողովի կողմից մեկ տարի ժամկետով: Վարչությունն ունի հինգ անդամ: Վարչության նիստերը գումարվում են Կազմակերպության նախագահի կողմից ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ: Վարչությունը որոշումներ է կայացնում վարչության անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Վարչության նիստը իրավազոր է, եթե նիստին մասնակցում են վարչության անդամների կեսից ավելին:

3.3. Վարչությունը.

- սահմանում է Կազմակերպության հաստիքները,
- ղեկավարում է Կազմակերպության ողջ գործունեությունը Ընդհանուր Ժողովի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում և հսկում կանոնադրության կատարմանը,
- ստեղծում է Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ, մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և հաստատում դրանց կանոնադրությունները,
- լուծում է Կազմակերպության անդամ ընտրվելու և հեռացվելու հարցերը,
- տնօրինում է Կազմակերպության դրամական և այլ միջոցները, որոնք սեփականության իրավունքով պատկանում են Կազմակերպությանը,
- որոշումներ է ընդունում Կազմակերպության գույք ձեռք բերելու, գույքը տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու, այդ թվում՝ օտարելու եւ դուրս գրելու վերաբերյալ՝ ըստ գույքի տեսակների ու չափերի,
- որոշում է ընդունում Կազմակերպության անդամների նյութական և այլ աջակցության մասին,
- Կազմակերպության անունից քննարկում և ընտրում է առաջարկված խնդիրների լուծման առավել գերադասելի տարբերակները և հետևում դրանց անմիջական իրականացմանը,
- սահմանում է անդամավճարի չափը եւ դրա գանձումը կազմակերպելու կարգը,
- լսում է Կազմակերպության ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվություններն իրենց կազմակերպությունների գործունեության վերաբերյալ և հաստատում դրանք,
- համակարգում է Կազմակերպության գործունեությունը շահագրգիռ կազմակերպությունների հետ,
- լուծում է իր իրավասությանը վերապահված այլ հարցեր:

3.4 Կազմակերպության նախագահին ընտրում է Կազմակերպության Ընդհանուր ժողովը մեկ տարի ժամկետով՝ վերընտրման իրավունքով: Կազմակերպության նախագահը ունի սույն կանոնադրությամբ հաստատված նախագահի բոլոր իրավունքները:

3.5 Կազմակերպության նախագահը.

- իրականացնում է Կազմակերպության ընթացիկ ղեկավարությունը Վարչության նիստերի միջև ընկած ժամանակաշրջանում,
- ղեկավարում է Վարչության աշխատանքները և նախագահում նրա նիստերին,
- ներկայացնում է Կազմակերպությունը բոլոր կարգի փոխհարաբերություններում,
- ապահովում է Ընդհանուր ժողովի և Վարչության որոշումների կատարումը,
- ընդունում և ազատում է հաստիքային աշխատողներին,
- տնօրինում է Կազմակերպության դրամական միջոցներն ու այլ գույքը, կնքում է պայմանագրեր և գործարքներ, կատարում զանազան քաղաքացիաիրավական գործողություններ, որոնք հետագայում հաստատվում են Վարչության կողմից,
- գլխավոր հաշվապահի հետ կազմում և Ընդհանուր ժողովի քննարկմանն է ներկայացնում Կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվությունը և հաջորդ տարվա բյուջեի նախագիծը,
- ուղղում է Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեությունը սահմանված հունով, կազմակերպում է հաշվառման և հաշվետվության միասնական համակարգ,
- հաշիվներ է բացում բանկերում,
- համակարգում է Կազմակերպության գործունեությունը այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ,
- լուծում է իր իրավասությանը վերաբերվող այլ հարցեր, որոնք նրան են վերապահված Ընդհանուր ժողովի և Վարչության որոշումներով:

3.6 Կազմակերպության վերստուգողն ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից մեկ տարի ժամկետով և հաշվետու է միայն ընդհանուր ժողովին:

3.7 Վերստուգողը հսկողություն է իրականացնում Կազմակերպության ղեկավար մարմինների գործունեության նկատմամբ, ստուգում է Կազմակերպության ֆինանսա-տնտեսական գործունեությունը, որի վերաբերյալ Ընդհանուր ժողովին ներկայացնում է հաշվետվություն, հետևում է գույքի պահպանմանը, Կազմակերպության բարձրագույն և ղեկավար մարմինների որոշումների կատարմանը:

3.8 Կազմակերպության ղեկավար մարմինների որոշումները անդամների կողմից բողոքարկվում են Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ Ընդհանուր ժողովին:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Կազմակերպության իրավունքները՝

- Կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ ՀՀ արդարադատության նախարարության կողմից պետական գրանցում ստանալու պահից,
- Կազմակերպությունը ունի իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքները և կրում է համապատասխան պարտականություններ, ունի կլոր կնիք, դրոշմակնիք և պաշտոնաթուղթ, առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, հաշվարկային հաշիվ բանկում ՀՀ և օտարերկրյա արժույթով: Իր անունից կարող է ձեռք բերել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ և կրել պարտականություններ,

- Կազմակերպությունը ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը և գործունեության ձևերը,
- ներկայացնում և պաշպանում է իր և իր անդամների իրավունքներն ու օրինական շահերն այլ հասարակական կազմակերպություններում, դատարանում, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում,
- օրենքով սահմանված կարգով, տեղեկատվություն է տարածում իր գործունեության մասին, հիմնում է լրատվական միջոցներ,

Կազմակերպությունը իրավունք ունի.

- օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերել, ստանալ, վարձակալել կամ այլ պայմաններով, այդ թվում անվճար, օգտագործել անշարժ գույք, հիմնական միջոցներ, տրանսպորտ, օրենքով չարգելված այլ գույք,
- ստեղծել առեւտրային կազմակերպություններ կամ մասնակից դառնալ այդպիսի կազմակերպություններին,
- կնքել օրենսդրությամբ չարգելված պայմանագրեր և գործարքներ,
- օտարել, վարձակալության և անվճար օգտագործման հանձնել ցանկացած անշարժ և շարժական գույք,
- ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում փոխառու միջոցների ներգրավմամբ, ՀՀ-ում և այլ պետություններում ստանալ վարկեր, հանգանակություններ, հատկացումներ, գրանտներ, այդ թվում արտարժույթով,
- Կազմակերպությունը իրավունք ունի իրականացնել օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:

4.2 Կազմակերպության պարտականությունները եւ պատասխանատվությունը.
Կազմակերպությունը պարտավոր է.

- օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն եւ հաշվապահական հաշվառում,
- վարել իր անդամների հաշվառումը,
- օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով տեղեկատվություն եւ հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններ: